

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի թռիչքային գործունեության հարցերով փորձագետ Արմեն Պապիկյանի կողմից 18.01.2022թ. – 18.07.2022թ. ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ

1. Իրականացված աշխատանքների ընդհանուր նկարագիր

1) Իմ կողմից լրամշակվել և ներկայացվել են հաստատման Թռիչքների շահագործման պահանջների տեխնիկական և ադմինիստրատիվ կանոնակարգի (AIR OPERATIONS REGULATION) հավելվածի երեք մասերը:

2) Իմ կողմից լրամշակվել և ներկայացվել են հաստատման Թռիչքային անձնակազմի պահանջների տեխնիկական և ադմինիստրատիվ կանոնակարգի (AIR CREW REGULATION) հավելվածի երկու մասերը:

3) Մշակել եմ թռիչքային գործունեության տեսչական ստուգման նոր ստուգաթերթիկները և ներկայացրել հաստատման:

4) Մասնակցել եմ Թռիչքային գործունեության վարչության տեսուչի ձեռնարկի (Flight Operations Department Inspector Manual) մշակման աշխատանքներին, արդյունքում լրամշակված Թռիչքային գործունեության վարչության տեսուչի ձեռնարկը ներկայացվել է հաստատման:

5) Կատարվել են փոփոխություններ Թռիչքային գործունեության վարչության տեսուչի ձեռնարկում և հանձնվել են հաստատման:

6) Մասնակցել եմ «Ավիացիայի մասին» օրենքի նոր նախագծի մշակման աշխատանքներին, առաջարկել եմ կատարել փոփոխություններ թվով 90 հոդվածներում:

7) Ներկայացվել է Թռիչքների շահագործման պահանջների տեխնիկական և ադմինիստրատիվ կանոնակարգի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի «Միացյալ ավիացիոն իշխանությունների/ Եվրոպական ավիացիոն անվտանգության գործակալության «Կոմերցիոն օդանավերի շահագործում» ԱՐՄ ԷՅՐ ՕՊՍ-ի (ARM AIR OPS) մասին» N 188-Ն հրամանի տարբերությունների ցանկը:


Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի թռիչքային գործունեության հարցերով փորձագետ՝

Պապիկյան Արմեն

18.07.2022թ.



Արմեն Պապիկյանի կողմից կատարված աշխատանքները գնահատում եմ



Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահ



Միհրան Խաչատրյան